ԱՐՄԱՆ ՇՈՂԻԿՅԱՆ

ԻՆՉ Է ՍԵԿՈՒԼՅԱՐԻԶԱՑԻԱՆ

Դեռևս ԺԹ դարի կեսին փիլիսոփաները, ընկերաբանները, պատմաբանները եւ կրոնագետները սկսեցին պնդել, որ գիտական, տեխնիկական եւ մշակութային գործընթացները հետ կմղեն Աստծո գաղափարը եւ կրոնը: Աստված եւ կրոնը կանհետանան այս աշխարհից ու կմնա միայն saeculum-ը. երկրային, պատմական, փորձառական իրականությունը: Ընկերային գիտություններում այս դրույթը պաշտպանող հոսանքը սովորաբար կոչվում է պոզիտիվիզմ: Դրա հետ է կապված Օ.Կոնտի անունը:

Ուրիշները խոսում են ռացիոնալիզմի եւ ռացիոնալիզացիայի մասին, վկայակոչելով նախ եւ առաջ Մ.Վեբերին: Սկզբում կրոնագետներն ու աստվածաբանները կտրուկ մերժում էին այս դրույթը, սակայն աստիճանաբար այն ուրիշ լույսի ներքո սկսեց դիտարկվել. հենց Աստծո հանդեպ հավատը եւ կրոնական կյանքը կնպաստեն գիտության զարգացմանը եւ մարդկային հասունությանը, եթե կրոնական պատկերացումները զերծ լինեն առասպելական տարրերից, իսկ Աստված եւ կրոնը մնան «աշխարհիկ», «սեկուլյարիզացված» տեսքում[1]:

Վերջին դարերում սեկուլյարիզացիայի (աշխարհականացում) այս երկու հակակրոնական եւ կրոնամետ թեզերի վերաբերյալ որոշ աշխատություններ են գրվել[2]:

Մշակույթում Աստծո եւ կրոնի փոփոխության տեսությունն արժանի է լուրջ ուշադրության մի շարք պատճառներով: Նախ Աստծո հանդեպ հավատը ինքնին երեւույթ չէ եւ այն չի առաջանում ոչնչից. մարդկային կրոնները առաջանում են պատմական զարգացման հետեւանքով եւ պատմության ընթացքում կարող են նաեւ անհետանալ: Սակայն հնարավոր չէ ժխտել,որ կրոնական գործոնը որոշակի դեր է կատարել մշակույթի զարգացման մեջ, թեեւ որոշ դեպքերում այն կախված է եղել մշակույթի փոփոխություններից: Արդյո՞ք արեւմտյան մշակույթում գոյություն ունի տեղ կրոնի համար, եւ ինչպիսի՞ ներդրում կարող է ունենալ այդ մշակույթում քրիստոնեությունը: Այս հարցին պատասխանելու համար նախ անհրաժեշտ է լուսաբանել այսպես կոչված սեկուլյարիզացիայի գործընթացը՝ հիմնվելով ընկերաբանների, փիլիսոփաների, պատմաբանների եւ աստվածաբանների ուսումնասիրությունների վրա:

Այսօր ընկերաբանությունում սեկուլյարիզացիա եզրույթը օգտագործվում է նշելու հա-

---

1 Սեկուլյարիզացիայի պոզիտիվիստական գնահատականը մեծ իրարանցում առաջացրեց նախ եւ առաջ 1950-60թթ., հատկապես Բոնհոֆերի, Գոգարտենի, Կոքսերի, Թիլիխի եւ Բուլթմանի (բողոքական թեւ), ինչպես նաեւ Թեյար դե Շարդենի, Շենյուի, Ռաների, Մեցի եւ Շիլեբեքսի (կաթոլիկ թեւ) աշխատությունների ազդեցությամբ: «Սեկուլյարիզացիայի աստվածաբանները» (ամերիկյան) Քոքսը (Cox), վան Բուրենը (van Buren), Համիլտոնը (Hamilton), Ալտիցերը (Altizer) Ավետարանը վերածեցին նույնիսկ նիցշեական կարգախոսի՝ «Աստված մեռած է»: Այս բանաձեւի իմաստն այն էր, որ պետք է մերժել Աստծո կեղծ պատկերները եւ եկեղեցական պահանջները, ընդունել հասարակական փոփոխություններ ու մասնակցել աշխարհիկ հասարակական խնդիրների լուծման՝ աշխարհիկ քաղաքում («Secular city» (Cox):

2 Տե՛ս **B. Wilson**, Religion in sociological perspective, Oxf.-N. Y., 1982, **K. Dobbelaere,** Secularization in a multidimensional concept /Curtent sociology/, 1981, vol. 29, էջ 2:

մար մարդու եւ հասարակության «ազատագրումը» կրոնական մտածողության մոդելներից, որն առաջ է բերում հասարակության «աշխարհիկացում»[3]: Ինչպես նշում է Սպերնա Վեյլանդը սեկուլյարիզացիան երկար ժամանակով ձգված անցում է մետաֆիզիկական փորձառությունից եւ ընկալումից դեպի այլ, ոչ մետաֆիզիկական իրականություն, երբ պատմական, մարդկային, վերջավոր աշխարհը ներկայանում է իբրեւ մարդկային պատասխանատվության եւ կոչման միակ վայրը, կամ, կարճ ասած, սեկուլյարիզացիան այն գործընթացն է, երբ «բարձրագույն» աշխարհները անհետանում են եւ մնում է միայն պատմական, մարդկային, վերջավոր աշխարհը[4]:

Այսպես, սահմանումը տրվեց, բայց այն դեռ ոչինչ չի լուսաբանում: Հատկանշական է, սակայն «անցում» հասկացությունը. ակնհայտ է, որ ինչ-որ բան կատարվել է հասարակության մեջ, թեեւ հնարավոր չէ նկարագրել այդ անցումը terminus a quo-ի (երբ եւ որտեղ է այն սկսվել) կամ terminus ad quem-ի (ինչին այն կհանգեցնի) հասկացություններով: Սակայն պատմաբանները, ընկերաբանները, փիլիսոփաները եւ աստվածաբանները առաջարկել են այդ **անցման** պատճառների մի շարք մեկնաբանություններ:

Որոշ պատմաբաններ հակված են նշելու Եվրոպայում սեկուլյարիզացիայի սկզբի ճշգրիտ թվականը.1646թ. ապրիլի 8: Վեստֆալյան պայմանագրի կնքման ժամանակ Ֆրանսիայի դեսպանը «հանուն խաղաղության» առաջարկեց որպես փոխհատուցում «աշխարհականացնել» (լատ. saecularisatio) այն հողատարածքները, որոնք մինչ այդ պատկանում էին վանականությանը[5]: **Այսպիսով, սեկուլյարիզացիայի գործընթացը սկսվեց սեփականատիրա-իրավական վեճերից, որոնք ընթանում էին կաթոլիկ եկեղեցու եւ ֆրանսիական պետության միջեւ:**

Մեր օրերում կաթոլիկ եկեղեցում saecularisatio նշանակում է հոգեւորականի կարգալուծություն, ինչպես նաեւ եկեղեցական շենքերի, վանքերի եւ այլ շինությունների աշխարհիկ բնույթ ստանալը: Այսպես, թեեւ saecularis եւ saecularisatio հասկացությունները օգտագործվում էին դեռ մինչեւ Վեստֆալյան պայմանագիրը (որը վերջ դրեց կրոնական պատերազմներին կաթոլիկության եւ Ռեֆորմացիայի, իսպանական աթոռի եւ գերմանական իշխանների միջեւ), սակայն արդեն ազդարարվում էր անցումը ինքնավար պետության գաղափարին եւ վերջինիս անջատումը եկեղեցուց, թեկուզեւ կասկածելի նշանաբանով euius regio, illius est religia (ում պատկանում է հողը, նրան պատկանում է նաեւ հավատքը)[6]:

Իրավունքի փիլիսոփաները Ռեֆորմացիայի (Քրիստիան Թոմազիո) եւ Լուսավորականության (Լոկ, Ռուսո, Կանտ) դարաշրջանում նպաստում էին ինքնավար պետության եւ ազատ քաղաքացիների ինքնավար բարոյականության գաղափարների հետագա զարգացմանը:

Այնպիսի առաջնորներ, ինչպիսիք էին Նապոլեոնը, Բիսմարկը, ռուսական ցարերը վերցրեցին այն ամենը, ինչը ժամանակին պատկանում էր վանականությանը: Նապոլեոնը նախկին Կլյունի վանքի ավերակների տեղը ստեղծեց ձիերի ախոռ: Նա նաեւ արգելեց որեւէ

3 **Peter Berger**, The sacred canopy, Garden City, 1967, էջ 107:
4 **Sperna Weiland**, Romeins Schetsbock, էջ 46-47:
5 **О. Ф. Лобазова**, Религиоведение, М., 2007, էջ 315-316:
6 **А. Хаутепен**, Бог: Открытый вопрос, М., 2008, 43-44:

վանք կառուցել Ֆրանսիայի եւ Բելգիայի տարածքներում: Դարերի ընթացքում ռուսական ցարերը սրիպում էին վանականներին վերադառնալ գյուղական շրջաններ եւ «օգտակար գործով»[7] զբաղվել: Ռուսական հեղափոխությունն ու սրալինյան բռնությունները միայն այդ քաղաքականության շարունակությունն էին:

Սեկուլյարիզացիայի ակունքները:

Կաթոլիկ ասպվածաբան Վալտեր Կասպերը նշում է, թե սեկուլյարիզացիան կարելի է հասկանալ ժամանակակից մտածելակերպի գլխավոր սկզբունքի՝ սուբյեկտիվության, հիման վրա: Այս պարագային մարդն իրեն է դիտարկում իբրեւ իրականության ըմբռնման ելակետ[8]: Դեպի մարդը կատարած այս շրջադարձը,որը հայտի է «մարդաբանական շրջադարձ» անունով, սկսվում է Վերածննդի դարաշրջանում, երբ կեցության կենտրոնում Աստծո փոխարեն դրվում է Մարդը՝ իբրեւ հումանիզմի բարձրագույն արժեք: Հասարակությունը եւ մարդը ասպիճանաբար ազատվում են հոգեւոր իշխանության խնամակալությունից: Վերածննդի դարաշրջանը առանձնանում է նաեւ այսկողմնային աշխարհի կարեւորության շեշտադրումով, աշխարհիկ արվեստի առկայությամբ եւ մարդակենտրոնությամբ՝ իբրեւ մշակույթի գաղափարախոսություն: Ռենեսանսի հումանիզմի հիմնավորման համար շարժիչ գործոն եղավ անտիկ հումանիզմի վկայակոչումը, որը լրացվեց Ռեֆորմացիայի գաղափարներով. այն է քրիստոնյայի ազատությունը, երկու՝ աշխարհիկ եւ հոգեւոր, իշխանությունների (թագավորությունների) տարանջատումը (Մ.Լյութեր), հավատացյալի աշխարհիկ կոչումը (Ժ.Կալվին)[9]:

ԺԷ դարում սկսվում է գիտության աշխարհիկացումը (Գ.Գալիլեյ, Ռ.Դեկարտ, Ի.Նյուտոն, Ֆ.Բեկոն, Թ.Հոբս, Ջ.Լոկ): Հավատքի եւ բանականության՝ հոգեւոր եւ աշխարհիկ ոլորտների բաժանման սկզբունքը ի հայտ եկավ տվյալ դարաշրջանի ոչ միայն քաղաքական, գիտական, այլեւ էթիկական ոլորտում, որը սկսեց դիտարկվել իբրեւ աշխարհիկ գիտություն: Սեկուլյարիզացիայի գործընթացում վճռական դեր խաղաց Ֆրանսիական Մեծ հեղափոխությունը, որը խորացրեց եւ ընդլայնեց աշխարհականացման գործընթացը՝ կրոնին հակադրելով մարդկային բանականությունը: 1789թ. նոյեմբերի 2 Թալեյրանի առաջարկով Ազգային ժողովը հետեւյալ որոշումն ընդունեց.«Ամբողջ եկեղեցական սեփականությունը պատկանում է ազգին»[10]:Դա նշանակում էր եկեղեցական սեփականության լիակատար բռնագրավում եւ վանքերի փակում: Այդ որոշման մեջ ավելի կարեւոր էր քաղաքական տեսանկյունը, քան տնտեսականը: Հեղափոխությունն առաջ բերեց ժողովրդական ինքնիշխանության գաղափարը. օրինական հեղինակություն ձեռք բերեց ոչ թե Աստված կամ ավանդությունը, այլ ժողովուրդը: **Այսպիսով սեկուլյարիզացիայի գործընթացի առաջացումը կապված է Նոր դարաշրջանի հետ, երբ աշխարհի բացատրման համար տիրապետող դարձավ ոչ թե կրոնը, այլ գիտությունը**:

Թեեւ մեր կողմից նշված սեկուլյարիզացիայի ամենից նշանավոր փուլերը (Վերածնունդ, Ռեֆորմացիա, Ֆրանսիական հեղափոխություն) ընդունվում են մասնագիտական

7 Անդ, էջ 47:

8 Տե՛ս **В.Каспер,** Иисус Христос, М., 2005, էջ 38-39:

9 Տե՛ս **М. Вебер,** Протестанская этика и дух капитализма, в Избранные произведения, М., 1990, էջ 61-272:

10 **О.Ф. Лобазова.** Религиоведение. М., 2007, 316:

գրականությունում, սակայն որոշ հեղինակներ նաեւ այլ փուլեր են առանձնացնում: Օրինակ Օ. Չեդվիքը[11] նշում է, թե այն խնդիրները, որոնք բնորոշվում են սեկուլյարիզացիա հասկացությամբ, բնավ ԺԷ կամ ԺԸ դարի արդյունքը չեն. դրանց արմատները խոր Միջնադարում են: Սեկուլյարիզացիայի բոլոր գործոնները՝ հավատքի եւ գիտության, եկեղեցու եւ պետության, կրոնական իդեալների եւ իրական կյանքի միջեւ եղած կոնֆլիկտները, ինչպես նաեւ քննադատական մոտեցումը հավատքի աղբյուրների նկատմամբ մենք գտնում ենք ԺԴ-ԺԵ դարերում: Անդրադառնալով այս հարցին՝ կաթոլիկ ասպվածաբան Անտոն Հաուտեպենը[12] նշում է, որ Միջնադարում չի եղել Եվրոպայի լիարժեք քրիստոնեացում կամ societas christiana: Ս. Սայքսը[13] ավելի առաջ է գնում եւ ասում,որ քրիստոնեությունը հենց սկզբից եղել է an essentially contested concept (էականորեն վիճելի հասկացություն): Իսկ Վերածնունդի, Ռեֆորմացիայի եւ Ֆրանսիական հեղափոխության ժամանակաշրջանում եվրոպացու մտքում եւ սրտում մի բան կատարվեց, որը հակամարտություն ստեղծեց քրիստոնեության եւ մշակույթի միջեւ: Հենց այդ հակամարտությունը կարելի է բնորոշել իբրեւ պայքարի եւ գործողության կոչ, իբրեւ «սեկուլյարիզացիա»: Այս առումով հատկանշական է Հ. Գ. Բլումենբերգի տեսակետը սեկուլյարիզացիայի վերաբերյալ. Նոր ժամանակների երեւույթը դիտարկվում է իբրեւ մարդու ինքնահաստատման ակտ եկեղեցական խիստ կառույցների նկատմամբ: Նոր ժամանակները ընկալվում են իբրեւ քննադատական ռեակցիա քրիստոնության նկատմամբ եւ մարդու ավտոնոմ ինքնորոշման փորձ:[14]

Մի շարք ընկերաբաններ եւ փիլիսոփաներ, հետեւելով Բլումենբերգին, սեկուլյարիզացիան դիտում են իբրեւ ազատագրման երեւույթ: Սեկուլյարիզացիան նշանակում էր ազատություն այլախոհների համար: Այն գիտնականներին տվեց հետազոտելու ազատություն, քաղաքական գործիչներին եւ իրավաբաններին՝ օրենսդրության ազատություն, քաղաքացիներին՝ ինքնակառավարման ազատություն, մամուլին՝ ազատ կարծիք արտահայտելու ազատություն, հանդուրժողականություն, մարդու իրավունքների պաշտպանություն, կրոնական համոզմունքների բազմազանություն, խղճի եւ դավանանքի ազատություն: Այս ամենը Արեւմուտքի ազատագրման արդյունքներն են: Լուսավորականությունը նշանանկում է մարդու ոչ հասուն վիճակի հաղթահարում, որի մեղավորը հենց ինքն է (Կանտ), եւ կյանքի բոլոր կողմերի ռացիոնալիզացիան (Վեբեր):

Ի դարի մի շարք ասպվածաբաններ մեծ ոգեւորությամբ ընդունեցին Ֆրանսիական հեղափոխության արժեքները (ազատություն, հավասարություն, եղբայրություն): Այնպիսի մարդիկ, ինչպիսին էին Գոգարտենը, Բոնհոֆերը, Շենյուն, Մեցը եւ Շիլլեբեքսը, հետեւելով Տրյոլչին (Troeltsch) եւ Վեբերին, շեշտում էին հուդայա-քրիստոնեական ավանդության «աշխարհիկությունը», որը չի ընդունում որեւէ կեղծ կրոն ու ամեն տեսակի պատմական կառույցների, սովորույթների բացարձակացումը , պաշտելով միայն Աստծուն եւ միայն Նրան թողնելով պատմությանը վերջնական գնահատական տալու իրավունքը: Սակայն այս միտումը զերծ չէ հակասություններից: «Մարդու ոչ հասուն վիճակի հաղթահարումը , որի մե-

11 Տե՛ս **O. Chadwick,** The secularization of the European mind in the Nineteenth Century, New York, 1991, էջ 4:

12 Տե՛ս **А. Хаутепен,** Бог: Открытый вопрос, М., 2008, էջ 38:

13 Տե՛ս **S. Sykes,** The identity of Christianity, London, 1984, էջ 251:

14 Տե՛ս **В. Каспер,** Бог Иисуса Христа, М., 2005, էջ 10:

ղավորը հենց ինքն է» ոչ միայն չբերեց ազատագրում հին կուռքերից, այլեւ ստեղծեց նորերին: Աստծո գաղափարի քննադատության արդյունքը եղավ այսպես կոչված գիտական աթեիզմը: Վերջինս հիմք դարձավ աշխարհի մեխանիկական պատկերացման, երբ վերլուծությունը հետեւում է վերլուծության, իսկ իմաստային կապ բնավ չկա: «Աստված» հասկացությունը իբրեւ աշխարհի բացատրություն կորցնում է իր նշանակությունը: Այս աշխարհում հարկավոր է ապրել «etsi Deus non doretur»(կարծես թե Աստված չկա): Աստված դառնում է ավելի անիրական: Վերջապես «Աստված մեռած է» (Նիցշե) արտահայտությունը հստակ կերպով մատնանշում է Նոր ժամանակների աշխարհզգացողությունը: Սակայն չի կարելի պարզապես Աստծուն հեռացնել աշխարհից եւ սպասել, որ ամեն ինչ նույնը կմնա: «Աստված» բառը խորհրդանշում է մարդկային պատմության մեջ մարդու եւ աշխարհի վերջին պատճառը եւ վերջին նպատակը: Եթե Աստված «հաշվի չի առնվում», ապա աշխարհին սպառնում է անիմաստությունն ու աննպատակությունը: Աստծու խորհրդի հետ միասին անհետանում է նաեւ Մարդու խորհուրդը; Մարդու մեջ սկսում են տեսնել միայն կենսաբանական պահանջմունքներ ունեցող էակի (Ֆրոյդ) կամ էլ լոկ հասարակական հարաբերությունների ամբողջություն (Մարքս): Այնտեղ, որտեղ չկա վերին աշխարհը, առաջանում է հարմարվողականության գաղափարախոսությունը, կորչում է ազատությունը, մարդը իջեցվում է խելոք կենդանու աստիճանին: Աստծու մահը բերում է մարդու մահը:

Սեկուլյարիզացիայի տարբերակները:

Սեկուլյարիզացիան միշտ եղել է կրոնի փիլիսոփաների եւ ընկերաբանների ուշադրության առարկան: Մի շարք փիլիսոփաների ուսմունքներում (Օ. Կոնտ, Կ. Մարքս, Բ. Ռասել, Է. Ֆրոմ, Ժ. Պ. Սարտր, Թ. Օ. Դիա) սեկուլյարիզացիան մեկնաբանվում է իբրեւ կրոնի «ծերացման» բնական գործընթաց՝ իբրեւ մարդկության զարգացման անխուսափելի հետեւանք: Հակառակ տեսակետի ներկայացուցիչները (Թ.Պարսոնս, Պ. Բերգեր եւ կրոնական փիլիսոփաները) պնդում են, որ սեկուլյարիզացիան տանում է ոչ թե կրոնի անկման, այլ հասարակության մեջ նրա դերի փոփոխությանը[15]:

Ընկերաբանությունում այսօր, թեեւ մասնագետները համաձայն են, որ սեկուլյարիզացիան ժամանակակից հասարակության բնորոշ գծերից մեկն է, սակայն տարբեր գիտնականներ տարբեր գնահատականներ են տալիս այս երեւույթին: Ընկերաբան Պիտեր Բերգերը սեկուլյարիզացիան դիտում է իբրեւ «սրբազանի» կորուստ եւ ընկերային կարգին սպառնացող վտանգ: Ըստ նրա, սեկուլյարիզացիան մարդուն մղում է այն պատկերացման, թե աշխարհում չկա ոչ մի սրբություն , բացարձակ արժեքները դառնում են հարաբերական, ինչը բերում է կյանքի իմաստազրկում եւ բարոյական ճգնաժամ[16]: Ամերիկացիգիտնական Օ'Դիին կարծում է, որ սեկուլյարիզացիան կրոնի եւ մղումն է գիտությամբ, ռացիոնալ մտածողությամբ եւ աշխարհիկ էթիկայով: Սեկուլյարիզացիան, ըստ Օ'Դիի տանում է կրոնի անկման: Նա դրականորեն է վերաբերվում այդ երեւույթին՝ կարծելով թե գիտությունն ու աշխարհիկ էթիկան բավարար չափով լուծում են ժամանակակից հասարակության «խնդիրները»՝ ավելորդ դարձնելով Աստծո եւ կրոնի անհրաժեշտությունը[17]: Ըստ Պարսոնսի, ավանդական

15 Տե՛ս «Религия.Энциклопедия», Минск, 2007, էջ 756-757:

16 «Основы религиоведения» (под ред. И.Н.Яблокова), М., 2006, էջ 20-22:

17 **Гараджа,** Социология религии, М., 2005, էջ 290-292:

կրոնական համակարգերի անկումը հանգեցնում է կրոնի նոր ձեւերի առաջացման, որոնք համապատասխանում են ժամանակակից մարդու ընկերային պահանջմունքներն[18]: Ռ. Բելլան նշում է, որ ընկերային կազմակերպությունների բարդությունների աճմամբ կրոնը «էվոլյուցիա» է ապրում: Նա առանձնացնում է կրոնի «էվոլյուցիայի» հինգ փուլ՝ 1. պարզունակ, 2. արխայիկ, 3. պատմական, 4. վաղ ժամանակակից, 5. ժամանակակից: Վերջինիս բնորոշ է կրոնական համոզմունքների ինստիտուցիոնալ ձեւերի թուլացումը, երբ կրոնական համոզմունքները դառնում են անհատի մասնավոր գործը[19]:

Կրոնագետ Շախնովիչը[20] առանձնացնում է սեկուլյարիզացիայի երեք մակարդակ.

1. Մակրոմակարդակ, որը սկսվել է 18-րդ դարի 2-րդ կեսին Եվրոպայում եւ Ամերիկայում, ինչի հետեւանքով հասարակության քաղաքական ոլորտը ազատագրվում է կրոնական կառույցների եւ սիմվոլների ազդեցությունից:

2. Միջին մակարդակ, երբ սեկուլյարիզացիան դրսեւորվում է իբրեւ հասարակական կյանքի մշակութային, ինտելեկտուալ եւ տնտեսական ոլորտների անկախացումով:

3. ԺԹ-Ի դարերում սեկուլյարիզացիան անցավ անհատական մակարդակի, այսինքն՝ կրոնը դարձավ քաղաքացու անձնական համոզումների հարց:

Սոցիոլոգիական հարցումները արեւմտյան երկրներում արձանագրում են հետաքրքրության նվազում ավանդական հավատալիքների նկատմամբ, սակայն ոչ կրոնականության անկում: Աստծո հանդեպ հավատը չի անհետացել, սակայն առկա է իբրեւ յուրաքանչյուր անհատի անձնական գործ: Սոցիոլոգ Գրեյվս Դեյվին բնութագրում է տվյալ երեւույթը որպես «հավատք առանց պատկանելության», իսկ Ժոզե Կազանովան, ուսումնասիրելով ժամանակակից եկեղեցական կյանքը՝ մատնանշում է հակառակ երեւույթը՝ «պատկանելություն առանց հավատքի»:

Սեկուլյարիզացիան բարդ, բազմաշերտ երեւույթ է: Նրա ուսումնասիրությունը մինչեւ այժմ կատարվում էր հիմնականում արեւմտյան հասարակության զարգացման տարբերակի վերլուծության հիման վրա: Մինչդեռ տարբեր հասարակություններ սեկուլյարիզացիան զարգանում է յուրահատուկ ձեւերով՝ կախված տվյալ սոցիումների առանձնահատկություններից: Օրինակ՝ Թուրքիայում կամ Ճապոնիայում սեկուլյարիզացիայի գործընթացը այլ է, քան արեւմտյան երկրներում:

Վերոնշյալ գնահատականները սեկուլյարիզացիայի վերաբերյալ ցույց են տալիս, որ չկա միանշանակ կարծիք այս երեւույթի մասին: Եվ ինչպես Գարեգին Ա Հայրապետն է նշում[21], աշխարհականության այս բարդ երեւույթի մեջ անհրաժեշտ է տարբերակել այն, ինչը կարող է լինել դրական ու օգտակար, եւ այն, ինչը մոլություն է, ամեն անդրանցականության ժխտում: Եթե աշխարհականությունը մարդկային կյանքի բոլոր կողմերի, անցողիկ գործողությունների արժեքն ընդունելն է սրբազանի հետ կողք կողքի, ապա այդպիսի աշխարհականության նախակարապետներից մեկը Հիսուս Քրիստոսն է, Նրա ուսմունքում ոչ մի հակադրություն չենք գտնում աշխարհիկի ու սրբազանի միջեւ, քանի որ մարդկային

18 Տե՛ս **T. Parsons.** Social system and the evolution of action theory. N.Y.-L. , 1977, էջ 50-62:

19 **R. Bellah,** Beyond belief, N. Y.,1970, էջ 30-75: Տե՛ս նաեւ «Современная западная социология» Словарь, М., 1990, էջ 31-32:

20 Տե՛ս «Религиоведение» (под ред. Шахновича) СПб., Питер, 2007, էջ 341-343:

21 « Մարդու կյանքը. հանդիպում երկնքի եւ երկրի միջեւ», Ս. Էջմիածին, 1999, էջ 236:

կյանքի բոլոր դրսևորումները Նրա համար կարևոր էին: Մյուս կողմից,- շարունակում է Վեհափառը,- տվյալ ճշմարիտ միտումը կարող է այլասերվել, եթե հասպարի սոսկ աշխարհիկ իրերի կարևորությունը:

Իր սկզբնական վիճակում կրոնը երկու հիմնարար գործառույթ էր իրականացնում. սոցիալական հարթությունում այն միավորում էր մարդկանց սրբազան (sacred), բարոյական արժեքների շուրջ, իսկ անհատական մակարդակում կրոնը մարմնացույց էր անում իր կողմից հռչակված ճշմարտությունների վերժամանակային բնույթը, ինչպես նաև մարդկային կյանքը չէր հանգեցնում նրա երկրային կեցության՝ նրան բարձրագույն, վեհ իմաստ եւ նպատակ տալով: Կրոնի սեկուլյարիզացիան կապված է այս երկու գործառույթների ճգնաժամի հետ: Սոցիալական մակարդակում՝ ներգրավման հնարավորության առումով, կրոնական հանրույթները իրենց տեղը զիջում են այլ կազմակերպություններին: Անհատական մակարդակում կրոնական արժեքները, թեև արտաքուստ պահպանում են իրենց ազդեցությունը (մարդիկ եկեղեցի են գնում, երեխաներին են մկրտում եւ այլն), սակայն, ըստ էության, հետ են մղվում այլ, ավելի պահանջարկված արժեքներով, որոնց շարքում է շահը, գործի արդյունավետությունը, պրագմատիզմը արարքներում ու նպատակներում եւ այլն: Այս պայմաններում, ինչպես նշում են փորձագետներն ու տեսաբանները[22], սեկուլյարիզացիան վերածվում է վերաաշխարհականացման (resecularization), երբ համընդհանուր ճգնաժամից դուրս գալու ելքը շատ հաճախ դիտվում են արեւելյան կրոնները՝ իրենց այսպես կոչված «խոր ոգեղենությամբ», օկուլտիստական եւ էզոթերիկ ուսմունքները եւ այլազան «նոր կրոնական շարժումները»:[23] Մասնագետների կարծիքով տվյալ շարժումները միայն սեկուլյարիզացիայի հակառակ կողմն են. այդ կազմակերպություններում ձեւավորվող կրոնականությունն ուղղակի փախուստ է մեր աշխարհիկացված աշխարհից եւ ոչ բնավ առկա խնդիրների կառուցողական լուծում:

Կրոնականն ու աշխարհիկը սեկուլյարիզացիայի հեռանկարում:

Սեկուլյարիզացիայի վերլուծությունը ամբողջական չի լինի, եթե չպատասխանենք այն հարցին, թե արդյո՞ք գոյություն ունեն կրոնի այլընտրանքներ: Հարցն այն է, թե կարող է արդյո՞ք գիտական մեթոդների վրա հիմնված ռացիոնալ մտածողությունը այնպիսի աշխարհայացք ձեւավորել, որը կպատասխանի մարդկային կեցության «սահմանային, հավերժական հարցերին»: Խոսքը, իհարկե, չի վերաբերում «գիտության» բառի նեղ մասնագիտական իմաստին, այլ աշխարհիկ հասարակության ինտելեկտուալ, «հոգեւոր» պաշարին, որ դրսեւորվում է փիլիսոփայության, էթիկայի, գեղագիտական ընկալման եւ սոցիալական մտքի մեջ: Կրոնի այլընտրանքներից մեկը ժամանակակից հասարակություններում համարվում է աշխարհիկ հումանիզմը[24]: Մյուս այլընտրանքն է համարվում վերադարձը

22 Տե՛ս **Д. А. Аникин,** История религий, М., 2007, էջ 165-170:

23 Իրականում այդ շարժումները լոկ էկլեկտիկ համակարգեր են եւ ուղղակի աղանդավորականություն են: Այդ մասին տե՛ս **Ս.Մայիլյան,** Ժամանակակից աղանդավորները Հայաստանում, Ս.Էջմիածին, 2000:

24 Աշխարհիկ հումանիզմի տեսությունը ներկայացված է ամերիկացի սոցիոլոգ Կուրտցի (ծնվ.1925թ.) աշխատություններում: Իր «Անդրանցական գայթակղություն.Կրոնի քննադատություն եւ պարանորմալ», «Կյանքի լիություն» աշխատություններում գիտնականը խոսում է կրոնի էության մասին՝ կապելով այն միստիկայի հետ: Ուսումնասիրելով Աստծո հանդեպ հավատքի առաջացման պատճառները, նա նշում է,որ հավատքը խորապես արմատացած է սովորույթների եւ ավանդությունների մեջ, որոնք ձեւավորվում են այն սոցիալական եւ մշակութային գործոնների ազդեցությամբ, որոնցով ապրում են ժողովուրդները: Կրոնի գոյության պատճառներից մեկը, ըստ

կրոնի սկզբնական ձեւերին (մոգական արարողություններ, դիցաբանություն, ապտղաբաշխություն, օկկուլտիզմ եւ այլն): Այս հավատալիքները, իրենց արմատներով հասնելով նախաքրիստոնեական դարաշրջան, բավականաչափ կենսունակ են նաեւ մեր օրերում՝ իբրեւ քողարկված հոգեբանական երեւույթներ[25]: Ավելի լայն իմաստով կրոնի փոխարինողի դերում շատ հաճախ հանդես են գալիս սոցիալական ուտոպիաները, գաղափարախոսական առասպելները, սեքսի առեւտրային պաշտամունքը եւ այլն:

Գիտակցելով որոշ կրոնական արմատականության բացասական ազդեցությունը հասարակական կյանքի վրա՝ չպետք է մոռանալ նաեւ, որ կրոնի անկումն իր հետ բերում է բազմաթիվ խնդիրներ՝ բարոյական քաոս, նիհիլիստական միտումներ այլ ավանդությունների նկատմամբ : Չպետք է մոռանալ, որ մարդկային գիտակցությունը հիմնվում է հսկայական եւ բազմազան փորձի վրա,ներառյալ նաեւ կրոնական փորձառությունը: Ողջ այս փորձը եւ դրա հիման վրա առաջացած կյանքի ընկալումը ձեւավորվում է փիլիսոփայության, պոեզիայի, գեղագիտության, քաղաքականության, ինչպես նաեւ կրոնի մեջ : Առանց մարդկության կողմից մշակված կրոնական եւ մշակութային ժառանգության յուրացման եւ զարգացման, առանց այդ ոլորտում հաջորդականության պահպանման, չկա ճանապարհ դեպի ապագա:

Սեկուլյարիզացիայի գործընթացի վերլուծությունը իր եզրահանգումներում կարեւոր է այն դեպքում, եթե այն օբյեկտիվ է, երբ խուսափում է ինչպես ջատագովական, այնպես էլ նիհիլիստական գայթակղությունից. երբ վերլուծողը առանց փաստերի հաշվառման սկսում է պնդել,թե պետք է բացառել կրոնը հասարակական կյանքից՝ իբրեւ անցյալի մնացորդ եւ մոռանալ դրա մասին, ապա մենք ակնհայտորեն տեսնում ենք ոչ օբյեկտիվ մոտեցում: Անհրաժեշտ է կրոնի եւ նրա հնարավորությունների գնահատման անաչառ վերլուծություն: Այդպիսի մոտեցումը արդիական է հատկապես հետկոմունիստական հասարակություններում: Սոցիալիզմի կործանումը առաջ բերեց ոչ միայն կոմունիստական գաղափարախոսության վարկաբեկումը, որի դրսեւորումներից էր «մարտնչող աթեիզմը»: «Սոցիալիզմի կառուցումը» իրենից ներկայացնում փորձ էր ստեղծելու «հասարակություն առանց կրոնի», դաստիարակելու «նոր մարդու», որն ազատ է «կրոնական անցյալի մնացորդներից»: Սակայն չի կարելի հավասարազոր նկատել սեկուլյարիզացիան իբրեւ օբյեկտիվորեն պայմանավորված ընկերային գործընթաց եւ կրոնի կործանումը բռնի ճանապարհով: Սոցիալիզմի կործանումը նշանակում էր աթեիզմի կործանումը ոչ միայն իբրեւ գաղափարախոսություն, այլեւ ամեն ոչ կրոնական գիտակցության ձեւի կործանում: Արդյունքում այսօր կարելի է արձանագրել ճգնաժամային երեւույթներ մշակույթի այն աշխարհիկ ուղղություններում, որոնք պատմական հեռանկարում իրենց դուրս են համարել կամ հակադրվել են կրոնական ավանդությանը եւ կրոնական մշակույթին[26]:

տեսաբանի, մոգական մտածելակերպն է: Կուրտցի համաձայն, կրոնական համակարգերն իդեալականացված երեւակայության ստեղծագործական արդյունքն են, որտեղ մարդիկ խորտակում են իրենց երազանքներն ու արցունքները:

25 Կրոնի նախնական ձեւերի հոգեբանական վերլուծության մասին տե՛ս **Э. Фромм,** Психоанализ и религия, Сумерки богов, М., 1990, էջ 162-166:

26 Այդպիսի դիրքորոշումը պատմականորեն ձեւավորվեց ԺԷ դարում, երբ այն կանխադրույթը ընդունվեց, թե հասարակությունը կարող է ազատ լինել կրոնական ավանդությունից (այդ տեսությունը առաջարկեց ֆրանսիացի մտածող Պ. Բեյլը):

Այսօր աստվածաբաններն ու հոգեւորականները ասում են, որ մարդկությանը սպառնող այնպիսի երեւույթներ, ինչպիսիք են ժամանակի գլոբալ խնդիրները, համաշխարհային ռազմական աղետի վտանգը, սոցիալական կեցության տարբեր սրվերային կողմերը, հասարակության հոգեւոր- բարոյական ճգնաժամը ուղղակիորեն կապված են այն բանի հետ, որ մարդկությունը հեռացել եւ կտրվել է իր կրոնական եւ մշակութային արմատներից ու կողմնորոշվել է դեպի «նյութական կարգի» արժեքները՝ սպառողականություն, ձեռքբերում, նյութապաշտություն: Այս առումով հատկանշական է Հովհաննես Պողոս 2-րդ պապի՝ «Dominum et vivificantem» («Կենդանարար Տերը») կոնդակը, որտեղ Վատիկանի հովվապետը նշում է,թե ժամանակակից քաղաքակրթությունը նկարագարդված է «նյութա պաշտության մռայլ երանգներով», ինչի հետեւանքով այնտեղ գծագրվում է «մահվան համընդհանուր պատկերը»: Այդ պատկերի մեջ պապը նրառում է վագքը գենքերի հետեւից, որը լի է միջուկային ինքնառչնչացման վտանգով, աղքատությունն ու սովը թույլ զարգացած երկրներում: Իսկ այդ ամբողջի պատասխանատուն, ըստ պապի, աթեիզմն է: Այս դրույթ պաշտպանության տրամաբանությունը հետեւյալն է.աթեիզմը իր բնույթով «մահվան գաղափարախոսություն է», քանի որ չի ընդունում հանդերձյալ կյանքի գաղափարը եւ կարծում է, որ եթե առանձին անհատը մահկանացու է, ապա նույնը կարելի է ասել նաեւ մարդկության պարագայում:Նյութապաշտությունը (իմա՛ մատերիալիզմ) նախընտրում է նյութականը, երկրորդական դեր տալով հոգեւոր-բարոյական արժեքներին: Հետեւելով այս տրամաբանության՝ պետք է նշել, որ այսօր մեր հանրային կյանքում իշխում է «զանգվածի» հոգեբանությունը: Կիրառական գիտությունները, հնարագիտությունը, արդյունաբերությունը, այս ամենը ծնունդ են տվել սպառողական հանրության հոգեբանության: Այսօր «խնդիրն այն է, որպեսզի ըմբռնենք, թե ինչպես մշակույթի հիմքում դնենք մարդու **հոգեւոր** (ընդգծումը մերն է Շ.Ա.) արժեքականության մասին հասկացությունը...»[27]: Հոգեւորն է ամբողջ մշակույթի հիմքը. մարդիկ ստեղծում էին երաժշտություն, ճարտարապետություն, գեղանկարչություն այն բանի համապատասխան, թե ինչպես են ընկալում Աստվածայինը՝ Արարչին, տիեզերքը, մարդուն: Այս երեք չափումներն են սահմանում յուրաքանչյուր մշակույթի բնույթը: Ամեն մշակույթ, որից դուրս է հանվում այդ ամենը, ծայրահեղ անկայունության մեջ է հայտնվում: Դա մեզ սովորեցնում է պատմությունը: Մեր ժամանակակից քաղաքակրթությունը շատ հաճախ բնորոշվում է իբրեւ ճգնաժամային քաղաքակրթություն: Այս հարցերը հանգամանորեն ուսումնասիրել է ամերիկացի (ծագումով ռուս) սոցիոլոգ Պիտիրիմ Սորոկինը[28]: Ըստ նրա, աշխարհում գոյություն ունեն երկու հիմնական տարբեր՝ հոգի եւ նյութ: Երբ մարդկությունը առաջնորդվում է հոգեւոր արժեքներով, այն ստեղծագործում է եւ հզոր կերպով զարգանում է: Այնուհետեւ սկսվում է կտրուկ փոփոխություն. առաջանում է «սենսիտիվ», զգացական քաղաքակրթությունը, երբ նյութական արժեքները ավելի կարեւոր են համարվում, քան հոգեւորը: Սկսվում է տեխնիկայի զարգացումը, հոգեւոր արժեքները հետին պլան են մղվում եւ դա տանում է բարոյական եւ հոգեւոր վակուումի: Այդ ժամանակ սկսվում է երրորդ՝ «իդեալիստական» փուլը, երբ նյութական արժեքները շարունակում են կարեւոր

27 «Մարդու կյանքը. հանդիպում երկնքի եւ երկրի միջեւ», Ս. Էջմիածին, 1999, էջ 250:

28 Տե՛ս **P. Sorokin,** Social and cultural dynamics, N.Y., 1962, v. 1-4, Система социологии, Пг., 1920, Т.1-2, Современная западная социология. Словарь, М., 1990, էջ 315-316:

մնալ, բայց մարդն արդեն հասկանում է, որ միայն դրանք բավարար չեն իր երջանկության համար: Մեր դարաշրջանը այսօր այդ երրորդ փուլում է:

Մեր նյութի սկզբում հարցադրում արեցինք.արդյո՞ք արևմտյան մշակույթում կա տեղ կրոնի համար, և ինչպիսի՞ ներդրում կարող է ունենալ այդ մշակույթում քրիստոնեությունը: Սկսած 1965 թվականից Եվրոպայում եղավ զանգվածային հեռացում եկեղեցուց, որը, ըստ էության, նշանակում էր հրաժարում Աստծու արևմտյան ավանդական ընկալումից:

Քրիստոնեական ավանդությունից հեռացումը չսահմանափակվեց եկեղեցական կյանքին չմասնակցելով. այն նախ և առաջ արտահայտվեց կյանքի առօրյայում, այն, ինչ մենք անվանում ենք մշակույթ.դա վարքագծի, հայացքների, արարողությունների և սիմվոլների ողջ համակարգն է, որը հարստացնում է մեր կյանքը: Լեզուն, արվեստը, գիտական մոդելները, աշխարհայացքը, կրոնական արտահայտության տեսակները, մարդկային հարաբերությունները, այդ ամենը ձևավորում է մշակույթը՝ անհատական և խմբային: Հավատացյալների համար Աստված իրենց մշակույթի առանցքն է: Իրենց արժեքները, նորմերը, սիմվոլները, աշխարհայացքը և գիտակցությունը կենտրոնացած է Աստծո գաղափարի շուրջ: Դրանք ձևավորում են ողջ սիմվոլիկ տիեզերքը, այն, ինչ կոչվում է «Աստված- աշխարհ-ես» համակարգ: Դրա համար էլ մշակույթից Աստծու հեռացումը նշանակում է աշխարհի և սեփական ես-ի ընդհանրապես նոր սահմանում: Աստծո նկատմամբ հավատքը և մյուս կողմից՝ անհավատությունը, ստեղծում է նոր աշխարհ և նոր ես: Այդ պատճառով մշակութային ազնոզիսը գիտակցության փոփոխության խոր գործընթաց է. այլ է մտածողությունը և վարքագիծը կյանքի բոլոր ոլորտներում, ներառյալ դրա սահմանները՝ կյանքը և մահը:

Անտիկ շրջանում և միջնադարում կրոնը և եկեղեցին որոշակի բազմազանություն էին բերում մարդկային կյանք: Կյանքի և մահվան, տառապանքի և հույսի, սիրո և ատելության, մեղքի և պատժի հարցերը սերտորեն կապված էին Աստծո հետ: Նույնիսկ Լուսավորականության շրջանում, երբ առաջին հարթության վրա դրվեցին անհատի ինքնավարությունը և մարդու իրավունքները, դավանանքի, ուսումնասիրության, խղճի և խոսքի ազատությունը, կրոնը և եկեղեցին պահպանվեցին և արժևորվեցին իբրև բարոյական պահվածքի և հասարակական կարգավորության հենարան: Ինչպես գրում է Վոլտերը, եթե Աստված գոյություն չունենար էլ, նրան անհրաժեշտ էր հորինել: Այսինքն Աստծո նկատմամբ վախը օրինապահության լավագույն ուժն է և ամենախիստ պատիժը:

Մշակույթն առանց Աստծո վտանգավոր է այն պատճառով, որ նրա փոխարեն դրվում են այլ կեղծ արժեքներ, որոնց ենթարկվում է կյանքը՝ երջանկություն, իշխանություն, սեփականություն և հաճույք: Նաև միշտ միտում է նկատվում տվյալ պարագայում բացատրել աշխարհի խորհուրդները ստվերային կողմից, էզոթերիկայի տեսանկյունից: Վերջապես, բացառելով Աստծուն մտածողությունից, մենք կորցնում ենք տարբեր մտածողական պատկերներ, որոնք կապված են կյանքի հատուկ , անընմբռնելի և անհաշվարկելի որակների հետ: Եթե հրաժարվում ենք «Աստված» հասկացությունից՝ մենք այլևս ունակ չենք լինում արտահայտելու այնպիսի բառեր, ինչպիսիք են օրհնություն և անեծք, անհրաժեշտություն և երջանկություն, ծագում և կոչում և նվիրում ու սեր: Մտածողությունն առանց Աստծո հասկացության հնարավոր է և դա մի անգամ ևս ապացուցում է գիտության արևմտյան

իդեալը: Սակայն Աստծո մասին խորհրդածությունը բացահայտում է մտածողության նոր հորիզոններ, որոնք անհնար է պատկերացնել առանց Աստծո գաղափարի:

Ծայրահեղ աշխարհականությունը, որից բոլոր Եկեղեցիները այսօր գանգատվում են, քանի որ այն դրսևորվում է իբրև Եկեղեցու և սրբության ժխտում, ի վերջո, մի մարտահրավեր է Եկեղեցու համար և այն պետք է ընդունել լրջորեն: Աստվածաբանության առաջ կա հերմենևտիկ խնդիր՝ վերարժեվորել անցյալի հավատքի ձևերը նոր մշակույթի լույսի ներքո: Ամենից առաջ ինքներս մեզ պետք է հարց տանք, թե ինչպես ենք հասկանում և արժեվորում այն, ինչն անվանում ենք նյութական: Հարկ է հաղթահարել նյութ- հոգի հին երկճյուղումը, որը դեռևս գերիշխող է: Մենք՝ քրիստոնյաներս, նյութի մեջ պետք է տեսնենք Աստծո գործը: Ասել է թե «մշակույթը հոգու մղումն է նյութի մեջ»: Անհրաժեշտ է քննադատական իրատեսություն, աստվածաբանություն, որը beyond secularization (աշխարհականությունից անդին է) և հավատքի ու եկեղեցու այնպիսի ներկայացում, որը կարող է գործել իբրև թթխմոր saeculum-ի, politicum –ի և humanum-ի ինքնավար իդեալների շրջանակներում: